

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գ. ԳԱԼՍՑԱՆ

Ժամանակակից պայմաններում ժողովրդատնտեսական համալիրի ներսում տեղի ունեցող էական և միայն նրան ներհատուկ տեղաշարժերից է սոցիալական և տնտեսական պրոցեսների փոխկապվածության, հետևաբար և տնտեսական ու սոցիալական խնդիրների լուծման փոխպայմանավորվածության ուժեղացումը: Սոցիալիստական արտադրանքային հիմնական տնտեսական օրենքի էությունից բխող՝ բնակչության հարաճուն նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումը, լինելով արտադրության հիմնական նպատակը՝ կապված տնտեսական զարգացման գործում սուբյեկտիվ գործոնի դերի անհամեմատ աճի հետ, վերածվում է արտադրության հետագա զարգացման պայմանի: Տնտեսական և սոցիալական պրոցեսների զարգացմանը զուգընթաց ակնհայտ է դառնում, որ հասարակական առաջընթացը անհնարին է առանց արտադրական և սոցիալական բավարար աճը ապահովող պայմանների կատարելագործման: Ժողովրդատնտեսական համալիրի կազմում զարգացման ընդհանուր պայմանների ստեղծման ֆունկցիան իրականացնում է ի ն ֆ ր ա կ ա ու ու ջ վ ա ծ ք ը : Ամենաընդհանուր ձևով այն կարելի է բնութագրել որպես արտադրական հարաբերությունների որոշակի ոլորտ, որում ստեղծված աշխատանքի արդյունքը ծ ա ու յ ու թ յ ու ն ն եր ի ձևով ընդհանուր պայմաններ է ստեղծում արտադրության գործունեության և անհատի հոգևոր զարգացման համար: Կամա թե ակամա հարց է ծագում, թե որքանով է նպատակահարմար և գիտականորեն արդարացված ինֆրակառուցվածքի կիրառումը այնպիսի կատեգորիաների առկայության պայմաններում, ինչպիսիք են անարտադրողական ոլորտը, ծառայությունների ոլորտը, սպասարկման ոլորտը: Մենք ելնում ենք այն հանգամանքից, որ տնտեսական նոր հասկացությունը, կատեգորիան, անպայմանորեն պետք է արտահայտի իրական օբյեկտ, և թե խոսքը գնում է նյութաառարկայական աշխարհի մասին կամ էլ օբյեկտիվ իրականության պրոցես: Ինֆրակառուցվածք հասկացությունը բնութագրում է տնտեսական համալիրի կազմում գործող մի համակարգ, որն իր ֆունկցիան իրականացնում է ծառայությունների մատուցման միջոցով: Սա հարցի մի կողմն է: Մյուս կողմը պարզարանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ արդեն ճանաչում գտած տերմինների կիրառման և նոր տերմինների, որպես գիտական հասկացությունների տրամաբանական բնորոշման միջոցների, ներմուծման հանգամանքին: Հայտնի է, որ գիտական հասկացությունները ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկվում, դրանով իսկ առաջ է գալիս ճանաչողության որոշակի աստիճանում պտնվող հասկացության և տերմինի հարաբերակցության խնդիրը: Եվ քանի

որ քաղաքատնտեսության կատեգորիաները իրենց հիմքում պատմական են, ժամանակի ընթացքում անհամապատասխանությունն է առաջանում հասկացության և այն բնորոշող տերմինի միջև: Այս է պատճառը, որ առանձին ուսումնառություններում խոսվում է քաղաքատնտեսության մեջ ընդհանուր ընդունելություն գտած որոշ տերմինների նոր բովանդակավորման մասին: Մեր կարծիքով սվլյալ դեպքում հասկացությունը բնորոշող տերմինի իրական իմաստի և բովանդակության միջև ծագած հակասությունը պետք է լուծվի նոր տերմինի կիրառմամբ: Հակառակ դեպքում տերմինի հին իմաստը կարող է խոչընդոտել ոչ միայն նրա նոր բովանդակության ճշմարիտ ըմբռնմանը, այլ նաև անհատակություն մտցնել քաղաքատնտեսության կատեգորիաների համակարգում: Նման խնդրի լուծումը իրականացվում է ի ն ֆ Ր ա կ ա ո ու ց վ ա ծ ք տերմինի ներմուծման միջոցով:

Չնայած այն բանին, որ ինֆրակառուցվածք տերմինը արդեն դրված է դիտական շրջանառության մեջ և մասամբ էլ կիրառվում է պլանավորման պրակտիկայում, նրա կոնկրետ բովանդակությունը բավարար չափով չի լուսաբանված: Հետազոտողների գերակշռող մասը համակարծիք լինելով այն հարցում, որ ինֆրակառուցվածքը տնտեսական գործունեությունը ապահովող օբյեկտիվորեն անհրաժեշտ պայման է, առաջ է քաշում նյութաիրային արտադրությունից նրա տարբերման, սահմանների, կազմի և կառուցվածքի մասին երբեմն նույնիսկ հակադիր կարծիքներ:

Սովետական տնտեսագետների՝ ինֆրակառուցվածքի վերաբերող առաջին ուսումնասիրությունները սկիզբ են առնում 60-ական թթ. երկրորդ կեսից: Սկզբնական աշխատանքները վերաբերում են կապիտալիստական տնտեսության ներսում ինֆրակառուցվածքի դերին և նշանակությանը: Ինֆրակառուցվածքը կապիտալիստական տնտեսության համակարգում դիտվում էր որպես «ընդհանուր օգտագործման սպասարկող ճյուղեր»¹ որոնց ֆունկցիոնալ նշանակությունն է «ամբողջ տնտեսության ապահովումը վերարտադրության համար անհրաժեշտ ընդհանուր պայմաններով»²: Հետաքրքրականն այն է, որ այս շրջանում հիմնականում ժխտվում էր ինֆրակառուցվածք կատեգորիայի առկայությունը սոցիալիզմի քաղաքատնտեսության հասկացությունների համակարգում:

Հիշատակված աշխատանքում Ս. Նոսովան նշում է, որ ինֆրակառուցվածքի դերը ակնհայտորեն հակասում է սոցիալիստական արտադրանեղանակի էությանը և այդ պատճառով էլ ինֆրակառուցվածք կատեգորիան նրա կարծիքով չի կարող կիրառվել սոցիալիզմի քաղաքատնտեսության մեջ³:

Ինֆրակառուցվածքի, որպես ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության ինքնուրույն ենթատարրի, առկայությունը և նրա տնտեսագիտական ուսումնասիրության անհրաժեշտությունը մատնանշող առաջին տնտեսագետները, որոնք հետազոտում էին զարգացած սոցիալիզմի տնտեսության կառուցվածքային փոփոխությունները, շեշտը դնում էին այն հանգամանքի վրա, որ ինֆրակառուցվածքը կոչված է նյութական արտադրության արդյունավետ զարգացման

¹ Л. Абалкин, Г. Григорян, В. Мотылев, Исследование новых явлений в экономике капитализма. Коммунист, 1968, № 18, с. 114.

² С. Носова, Апологетика капитализма и некоторые аспекты буржуазных теорий инфраструктуры.—Экономические науки, 1970, № 11, с. 102.

³ Նույն տեղում, էջ 99—206:

ընդհանուր պայմանների ստեղծմանը: Այսպես, օրինակ, Ս. Հայնմանը ժողովրդատնտեսական համալիրի ներսում առանձնացնում է միայն «նյութական արտադրության ինֆրակառուցվածքը»՝ «նյութական արտադրությունը սպասարկող ճյուղերի համալիրը»⁴: Այս շրջանում ինֆրակառուցվածքի ուսումնասիրությունը կատարվում էր արտադրության տարածքային կազմակերպման գործում նրա ունեցած դերի վերլուծության նպատակով: Հասարակական աշխատանքի բաժանման պրակտիկայից ելնելով՝ առանձին տնտեսագետներ ու տնտեսաաշխարհագետներ ժողովրդատնտեսական համալիրի ուցիտնալ կազմակերպումը, տնտեսական գործունեության հիմնական ձևերը քննարկում էին երկու համակարգերի (ճյուղերի խմբերի) սահմաններում՝ հասարակական մասնագիտացումը ձևավորող (կառուցվածքաձևավորող) և վերջինիս գործունեությունը սպասարկող (կառուցվածքասպասարկող): Ինֆրակառուցվածքը դիտվում էր որպես ժողովրդատնտեսական այնպիսի օբյեկտների և ինժեներատեխնիկական կառուցվածքի՝ համալիր, որոնք ապահովում են կոնկրետ տարածքում տեղադրված արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների արդյունավետ գործունեության ընդհանուր նյութատեխնիկական պայմանները, ինչպես նաև բնակչության նորմալ կյանքի, համապատասխան շրջաններ աշխատուժի ներգրավման համար նյութական և կուլտուր-կենցաղային պայմաններ ստեղծող կառույցները, ձեռնարկությունները, կազմակերպությունները: Նման տեսանկյունով քննելու դեպքում ինֆրակառուցվածքը ներկայացվում էր որպես սոսկ ռեգիտնալ տնտեսության կատեգորիա, և նրա ծագումն ու զարգացումը բացատրվում է տարածքային զարգացման և տնտեսական շրջանների, նյութական արտադրական համալիրի զարգացման պահանջներով:

Հարցի նման քննարկումը հատուկ չէ միայն կոնկրետ տնտեսական ուսումնասիրություններին. նման մոտեցում է նկատվում նաև որոշ քաղաքատնտեսական հետազոտություններում: Ի. Ի. Սիգովը գրում է. «Ռեգիտնների համապատասխան ձևավորվել է այս կամ այն տարածքում արտադրական բնակչության կյանքի օբյեկտիվ պայմանները արտահայտող ինֆրակառուցվածք հասկացությունը»⁵: Ինֆրակառուցվածքի միայն ռեգիտնալ տեսանկյունով քննարկումը, չնայած որոշակի տեսական և գործնական նշանակությանը, հնարավորություն չի տալիս ամբողջովին վերհանել նրա իրական դերը սոցիալիստական վերարտադրության պրոցեսում: Ուստի տնտեսական օրենքների գործունեության վերլուծության տեսանկյունից նման կարգի քննարկումը ակնհայտորեն անբավարար է:

Վերարտադրության տնտեսական և սոցիալական պրոբլեմներին վերաբերող սովետական գրականության մեջ ինֆրակառուցվածքի ուսումնասիրությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ելնելով նրա կազմի վերաբերյալ երկու իրարամերժ կարծիքներից: Չնայած այն բանին, որ սովետական տնտեսագիտական գրականության մեջ այդ կատեգորիայի ներմուծման ժամանակ ընդունված էր ինֆրակառուցվածքի երկատումը ար-

⁴ С. Хойнман, Научно-техническая революция и структурные изменения в экономике СССР.—Коммунист, 1969, № 14, с. 74.

⁵ И. И. Сигов, Обобществление производства и развитие систем управления экономикой, М., 1977, с. 15.

տաղրական և սոցիալական տարրերի, առաջին խմբի տնտեսագետները ժըխտում են նրա կաղմում սոցիալական ենթատարրի առկայությունը: Մրանով նրանք անտեսում են սոցիալիստական վերարտադրության պրոցեսում ինֆլըրակառուցվածքի կողմից արտադրողական ուժերի էական տարրի՝ աշխատուժի գործունեության համար ընդհանուր պայմանների ստեղծման պրոբլեմը: Նման մեկնաբանության հիմքում դրվում է այն դրույթը, թե «բոլորովին սխալ է այնպիսի ճյուղերի, ինչպիսիք են առողջապահությունը, լուսավորությունը, քաղաքաշինությունը և այլն, ինֆրակառուցվածքային համարելը, որոնք իբրև թև կոչված են միայն ընդհանուր պայմաններ ապահովելու ինչ-որ այլ, ավելի կարևոր նպատակի համար, քանի որ սովետական ժողովրդի նյութական և հոգևոր պահանջմունքների ըստ ամենայնի բավարարումը հենց սոցիալիստական հասարակության հիմնական նպատակն է»⁶: Մեր կարծիքով մի բան է տնտեսության որևէ օղակի ֆունկցիոնալ դերը և բոլորովին այլ՝ նրա գործունեության վերջնական նպատակը, ըստ որում դրանք կարող են համընկնել կամ չհամընկնել: Վերը բերված քաղվածքի հեղինակը դրանք նույնացնում է: Ինչպես սոցիալիստական տնտեսության յուրաքանչյուր օղակի, այնպես էլ սոցիալական ինֆրակառուցվածքի գործունեությունը ուղղված է՝ հասարակության բոլոր անդամների պահանջմունքների է՛լ ավելի բավարարման նպատակին:

Ինֆրակառուցվածքի, որպես ժողովրդատնտեսական համալիրի հարաբերականորեն ինքնուրույն համակարգի, առավել ամբողջական նկարագիրը տալիս է տնտեսագետների երկրորդ խումբը (Վ. Ա. Ժամին, Բ. Ն. Խոմելյանսկի, Ժ. Տ. Տոչչենկո, Ա. Ի. Կոչերգա, Ա. Գ. Պավլովա և այլք): Ամենաընդհանուր ձևով ինֆրակառուցվածքը դիտվում է որպես ընդհանուր կիրառման սպասարկող արտադրական և ոչ արտադրական ճյուղերի խումբ, որոնց գործունեությամբ կառուցվածքաձևավորող ճյուղերի զարգացման համար ստեղծվում են անհրաժեշտ ընդհանուր պայմանները: Ընդ որում, այս դիրքորոշման տնտեսագետների մի մասը (Ուտենկո, Ժ. Տ. Տոչչենկո, Բ. Վ. Խոմելյանսկի և այլք) ընդհանուր պայմանները սահմանափակում են միայն նյութաառարկայական գործոններով:

Ինֆրակառուցվածքի և մասնավորապես նրա սոցիալական տարրի բովանդակության համակողմանի և խորը վերլուծությունը առաջին անգամ կատարվել է Վ. Ա. Ժամինի կողմից⁷: Ըստ Ժամինի, ինֆրակառուցվածքը, որպես սոցիալիզմի քաղաքատնտեսության կատեգորիա, դասվում է արտադրանական կառուցվածքային այնպիսի տարրերի շարքը, որպիսիք են արտադրողական ուժերը (նրանց նյութաիրային բովանդակության տեսակետից) և արտադրական հարաբերությունը (հասարակական ձևի տեսակետից): Ինֆրակառուցվածքը արտադրողական ուժերի միասնական տարր է, որը ընդգրկում է անմիջապես հիմնական արտադրությունը սպասարկող օժանդակ, լրացական ճյուղերը, արտադրությունները, գործունեության ձևերը (արտադրական ինֆրակառուցվածք), և ոչ արտադրական ոլորտի ճյուղերը, ենթաճյուղերը, որոնց կապը արտադրության պրոցեսին միջնորդավորված է (սոցիալական ինֆրակառուցվածք): Ինֆրակառուցվածքի հետազոտության, նրա

⁶ В. П. Красовский. Инфраструктура — важное звено советской экономики, Вестник АН СССР, 1980, с. 85.

⁷ В. А. Жамин. Инфраструктура при социализме.—Вопросы экономики, 1977, № 2.

Ճյուղերը արտադրականի և սոցիալականի բաժանելիս Վ. Ժամինը ղեկավարվել է տնտեսության ճյուղերը արտադրական և ոչ արտադրական ոլորտներում խմբավորելու՝ տնտեսագիտության մեջ ընդունված ավանդական մոտեցմամբ: Նման մոտեցման հետևանքը եղել է այն, որ բացահայտ սոցիալական ուղղվածություն ունեցող որոշ ստորաբաժանումներ դրվել են արտադրական ինֆրակառուցվածքի կազմում (արտադրության համար կադրերի պատրաստումը և վերապատրաստումը):

Ժողովրդատնտեսական համալիրի ներսում նրա առանձին տարրերի փոխկապվածության ուժեղացման, որակապես նոր օրգանական կապերի (գիտություն-տեխնիկա-արտադրություն, կրթություն-արտադրություն) ընդարձակման հետ կապված՝ ինֆրակառուցվածքը կատարում է ավելի ծավալուն ֆունկցիա, քան սոսկ ծառայությունների արտադրությունն է: Եվ նրա դիտարկումը որպես սպասարկող ճյուղերի հանրագումար աղավաղված պատկերացում է տալիս այդ համակարգի դերի մասին: Նման մոտեցման հետևանքով որոշ տնտեսագետների մոտ կիրառում են գտել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են, օրինակ՝ բնակարանային-կոմունալ ինֆրակառուցվածք (Բ. Ն. Խոմելյանսկի), բնության ինֆրակառուցվածք, գիտության ինֆրակառուցվածք (Վ. Գ. Տերենտև), ժողովրդական կրթության ինֆրակառուցվածք, պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության ինֆրակառուցվածք (Ժ. Տոշենկո):

Այստեղ էականն այն է, որ ինֆրակառուցվածքի առանձնացումը իմաստունի և նշանակություն է ձեռք բերում միայն այն դեպքում, երբ ժողովրդատնտեսական համալիրի ներսում ինֆրակառուցվածք հասկացությամբ միավորված ճյուղերը հասարակական վերարտադրության պրոցեսում իրականացնում են մեկ միասնական՝ արտադրողական ուժերի զարգացման ընդհանուր պայմաններ ապահովող ֆունկցիա: Այս ամենակարևոր հանգամանքն էլ հաշվի առնելով՝ է. Բ. Ալևեր իրավացիորեն նշում է. «Միայն թվարկված տարրերը, ինչպես արտադրական, այնպես էլ սոցիալական, միասին վերցված, իրենցից ներկայացնում են այն, ինչ մենք իրավունք ունենք անվանելու ինֆրակառուցվածք, հակառակ դեպքում այդ հասկացությունը կորցնում է իր իմաստը»⁸:

Ինֆրակառուցվածքը, որպես վերարտադրության ֆունկցիոնալ տարր, բրնտեթագրվում է երկու առանձնահատուկ հատկանիշներով. նախ, որ նրանում չի ստեղծվում նյութաիրային նոր առարկա, և նրա գործունեության արգասիքը կարող է սպառվել միայն արտադրության պրոցեսին դուզընթաց և երկրորդ՝ այն պատկանում է արտադրության պրոցեսի այնպիսի պայմանների (մարդկային աշխատանքով ստեղծված) թվին, որոնք չեն մասնակցում նյութական բարիքների անմիջական արտադրության պրոցեսին և դրանով իսկ հանդիսանում են արտադրության ընդհանուր պայմաններ: Ինֆրակառուցվածքային ծառայությունների իրականացումը տեղի է ունենում նյութաիրային բարիքների արտադրության անմիջական պրոցեսից դուրս: Արտադրության պրոցեսի արգասիքն այստեղ նոր կամ վերականգնված առարկա չէ, այն արտադրության պրոցեսում հանդես է գալիս օգտակար գործունեության ձևով և այդ օգտակար արդյունքը հնարավոր է սպառել միայն արտադրության (ծառայությունների) պրոցեսի ժամանակ, նրան համընթաց:

⁸ Э. Б. Алаев. Региональное планирование в развивающихся странах. М., 1973. с. 51.

Այսպիսով, ինֆրակառուցվածքը արտադրողական ուժերի հարաբերականորեն ինքնուրույն տարր է, իր մեջ ներառում է սպասարկող ճյուղեր, ենթաձյուղեր, գործունեության ձևեր, որոնք ծառայությունների մատուցման միջոցով ընդհանուր պայմաններ են ստեղծում արտադրության նյութական և անձնական գործոնների գործունեության և զարգացման համար: Որպես սոցիալիզմի բաղադրատեսուցության կատեգորիա, այն արտահայտում է ժողովրդական համալիրի կազմում որոշակի համակարգի գործունեությամբ պայմանավորված արտադրական հարաբերություններ, իսկ այդ համակարգի ֆունկցիոնալ նշանակությունը արտադրության, անհատի բազմակողմանի զարգացման և հասարակության նորմալ գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր պայմանների ստեղծումն է: Զարգացած սոցիալիզմի արդի փուլում ինֆրակառուցվածքի գործունեության հիմքում ընկած է սոցիալիստական արտադրանքանակի հիմնական տնտեսական օրենքը և նրա գործունեությունն ուղղված է այդ օրենքի պահանջների բավարարմանը:

Կախված բուն արտադրության կամ սոցիալական զարգացման համար ընդհանուր պայմաններ ստեղծելու հանգամանքից, ինֆրակառուցվածքի ներսում տարբերում ենք արտադրական և սոցիալական տարրերը՝ արտադրական և սոցիալական ինֆրակառուցվածքները: Արտադրական ինֆրակառուցվածքին են վերաբերում ժողովրդատնտեսական համալիրի այնպիսի օղակները, որոնցում իրականացվում են բեռների, էներգիայի տեղափոխման, արտադրանքի պահպանման, մթերման, մատակարարման, ինֆորմացիայի հավաքման և հաղորդման և այլ գործունեությունը: Արտադրական ինֆրակառուցվածքի գործունեությամբ պայմանավորված հարաբերությունները նյութական արտադրության շրջանակներում արտադրանքի շարժով պայմանավորված հարաբերություններ են: Այդ հարաբերությունների ծագումը կապված է արտադրանքի, անմիջական արտադրության փուլից շրջանառության ոլորտ անցման հետ՝ նորից դեպի այն ետ վերադարձնելու նպատակով: Ակընհայտ է, որ այս դեպքում արտադրանքի (արտադրության միջոցների) տնտեսական ձևը մնում է անփոփոխ: Արտադրական ինֆրակառուցվածքային գործունեությունը իրականացվում է նյութական բարիքների արտադրության որոշակի (շրջանառության) փուլում, օգտակար գործունեությամբ ստեղծվում է արժեք և այն փոխանցվում է արտադրվող արդյունքի արժեքին:

Եթե արտադրական ինֆրակառուցվածքին ներհատուկ են արտադրական գործունեությամբ պայմանավորված հարաբերություններ, ապա սոցիալական ինֆրակառուցվածքի առանձնահատկությունը այն է, որ բուն արտադրական (առաջնային) հարաբերությունների հետ, միաժամանակ, առաջ են դալիս նաև «երկրորդային, երրորդային, ընդհանրապես փոխանցված, ոչ սովորական արտադրական հարաբերություններ»⁹, վերջնական արդյունքի բաշխմամբ, վերաբաշխմամբ և սպառմամբ բնորոշվող հարաբերություններ, հարաբերություններ, որոնք պայմանավորված են նյութական և հոգևոր արտադրությունների միջև տեղի ունեցող փոխադարձ փոխանակությամբ:

Ինֆրակառուցվածքի բաժանումը արտադրականի և սոցիալականի կատարվում է տնտեսագետների գերակշռող մասի աշխատություններում: Չնայած որ այդ երկու տերմինները համապատասխան հասկացությունները բնորոշում են բավարար չափով, որոշ տնտեսագետներ արտադրական ինֆրա-

⁹ К. Маркс, Ф. Энгельс. Соч., т. 12, с. 735.

կառուցվածք տերմինը առաջարկում են փոխարինել սոցիալական ինֆրակառուցվածքով, իսկ սոցիալականը՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-կենդանական: Մեր կարծիքով ընդհանուր ճանաչում գտած այդ տերմինների փոխարինումը նորերով ինքնանպատակ է և շարդարացված:

Ինֆրակառուցվածքի սոցիալական տարրերին նվիրված ուսումնասիրություններում նրա բնորոշման, կազմի, ֆունկցիոնալ դերի մասին կարծիքների որոշակի միասնականություն չկա: Ինֆրակառուցվածքի առանձնացման հիմնական շահանքին և նրա բնութագրման հատկանիշներին տարբեր տեսանկյուններից մոտենալու հետևանքով որոշ հեղինակներ նրանում ներառում են այնպիսի ճյուղեր, օղակներ, ինչպիսիք են շինարարությունը, վերանորոգման ծառայությունը: Նույն պատճառով սոցիալական ինֆրակառուցվածքի կազմի մեջ չեն ընդգրկվում ակնհայտորեն գործունեության սոցիալական ուղղվածություն ունեցող որոշ ստորաբաժանումներ, օրինակ՝ առևտուրը, արտադրության համար կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, քաղաքական և հասարակական կազմակերպությունները: Բ. Ն. Խոմելյանսկին սոցիալական ինֆրակառուցվածքի (ըստ հելինակի՝ ինֆրակառուցվածքի) կազմից բացասում է բանակը, հասարակական կարգի պահպանումը, վարչական կառավարման պետական օրգանները, պատճառաբանելով, որ ինֆրակառուցվածքային աշխատողները պարտադիր կերպով ներառվում են տնտեսական, բազիսային և ոչ թե վիրնաշենքային հարաբերություններում¹⁰: Նման փաստարկը բնութագրում է ուսումնասիրության օբյեկտը, բայց ոչ ամբողջովին, քանի որ տեսադաշտից դուրս է մնում այդ երևույթի սոցիալական կողմը, այսինքն, որ վերը նշված գործունեության ոլորտները մասնակցում են արտադրության ընդհանուր պայմանների ստեղծմանը և դրանով իսկ ներառվում ինֆրակառուցվածքում:

Ինֆրակառուցվածքի կազմի ոչ միասնական ըմբռնումը ևս պատճառ է դառնում տարբեր հեղինակների կողմից նրա տարբեր սահմանումների, որոնցից առավել հաջողված ենք համարում Ա. Ի. Կոչերգայի, Ա. Ա. Մազարակիի և Վ. Պ. Բեվզի կողմից տրված բնորոշումը, ըստ որի ինֆրակառուցվածքը դիտարկվում է որպես սպասարկման ոլորտի ճյուղերի ամբողջություն, որոնց գործունեությունը ուղղված է բնակչության անձնական պահանջարկների բավարարմանը, նրա կենսագործունեության և մտավոր զարգացման ապահովմանը¹¹: Չնայած բնորոշման ընդհանուր հաջողվածությանը, նրանում բացակայում է այնպիսի էական հանգամանքի ընդգծումը, ինչպիսին է աշխատուժի վերարտադրության և անհատի բազմակողմանի զարգացման համար ընդհանուր պայմանների ապահովումը: Քանի որ ինֆրակառուցվածքի առանձնացումը և ուսումնասիրությունը կատարվում է հասարակական վերարտադրության պրոցեսի համար ընդհանուր պայմաններ ստեղծելու տեսանկյունից, ապա նրա բնորոշման սահմանափակումը միայն ծառայությունների մատուցմամբ չի պարզաբանում ինֆրակառուցվածքի էությունը: Բնականաբար հարց է ծագում, որ եթե սոցիալական ինֆրակառուցվածքի (ընդ-

¹⁰ Б. Н. Хомелянский, Экономический эффект социального планирования: социальное-экономическая инфраструктура в воспроизводственном процессе, М., 1980, с. 13, 39.

¹¹ Социальная инфраструктура и моделирование ее развития в сб. Всесоюзная научная конференция «Социально-экономические проблемы непродуцированной сферы и услуг в свете решений XXV съезда КПСС», Секция II, Львов, 1970, с. 38.

հանրապես ինֆրակառուցվածքի) ֆունկցիան ծառայությունների արտադրությունն է, այսինքն ծառայությունների ոլորտի գործունեության արդասիրք, իմաստ ունի՝ արդյոք այդ նոր հասկացության ներմուծումը քաղաքատնտեսության մեջ: Մեր կարծիքով հասարակական արտադրության կառուցվածքում տեղի են ունեցել էական տեղաշարժեր, որի հետևանքով էլ նրա կազմում ձևավորվել է գործունեության ինֆրակառուցվածքային ոլորտը: Լինելով արտադրության զարգացման հետևանք, այժմ նա ինքն է վերածվել նրա հետագա զարգացումն ապահովող պայմանի: Հենց սա է այն որակական տարբերությունը, որը առկա է սոցիալական ինֆրակառուցվածքի (ինֆրակառուցվածքի) և սպասարկման ոլորտի (ծառայությունների ոլորտի) միջև:

Որոշ հետազոտողներ սոցիալական ինֆրակառուցվածքի բնութագրման ժամանակ ուշադրությունը կենտրոնացնում են քանակական կողմի վրա, այն բնորոշելով որպես սպասարկման ոլորտի որոշակի ճյուղերի ամբողջություն, երբեմն էլ նրանում ներառելով նաև այլ ստորաբաժանումներ՝ ընդգծելով միայն սոցիալական ինֆրակառուցվածքի և ծառայությունների ոլորտի շրջանակների անհամապատասխանության հանգամանքը, որ տվյալ դեպքում գլխավորը չէ:

Այսպիսով՝ սոցիալական ինֆրակառուցվածքը կարելի է բնութագրել որպես ծառայություններ ներկայացնող ճյուղերի, ենթաճյուղերի և այլ ստորաբաժանումների ամբողջություն, որի գլխավոր ֆունկցիոնալ նշանակությունը աշխատուժի վերատադրության, անհատի համակողմանի զարգացման և հասարակության սոցիալական պահանջումների բավարարման համար ոչ նյութական պայմանների ստեղծումն է:

Ընդհանուր պայմանների ստեղծմամբ պայմանավորված արտադրական հարաբերությունների վերլուծության համար էական նշանակություն ունի ծառայությունների դրսևորման ձևը՝ ծառայությունները անմիջականորեն մատուցվո՞ւմ են անհատին, հասարակությանը, թե ոչ: Այս առումով սոցիալական ինֆրակառուցվածքի շրջանակներում կատարվող ծառայությունները անհրաժեշտ է բաժանել երկու խմբի. ա) ծառայություններ, որոնք մարմնավորվում են անհատի (հասարակության) մեջ և բ) ծառայություններ, որոնք նյութականանում են նյութաիրային բարիքներում «շարժման ձևից անցում են կատարում առարկայական ձևի»¹²:

Տնտեսագիտության մեջ առաջին խումբ ծառայությունները ընդունված է անվանել զուտ ծառայություններ, իսկ երկրորդը՝ նյութական ծառայություններ: Ծառայությունների նման երկատումը էական նշանակություն ունի նյութական և ոչ նյութական արտադրությունների, նյութաիրային արտադրության և ինֆրակառուցվածքի, սոցիալական ինֆրակառուցվածքի սահմանների ճշգրտման գործում: Ըստ էության նյութական ծառայությունների իրականացումը հանդես է գալիս որպես նյութաիրային սպառարժեքների արտադրության ուրույն պրոցես: Նման կարգի ծառայություններ իրականացնող ստորաբաժանումները խմբավորված են բնակչության կենցաղային սպասարկման ճյուղում: Այստեղ իրականացվող աշխատանքը ուղղված է կամ արդեն ըստևելով նյութական բարիքների սպառողական հատկանիշների վերականգնմանը (վերանորոգման ծառայություն), կամ էլ նոր նյութաիրային սպառարժեքների արտադրությանը (պատվերների կատարման ծառայություն):

¹² К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 46, часть I, с. 455.

Վերջին դեպքում գործունեության տվյալ ձևի պատկանելությունը նյութա-իրային արտադրությանը ակնհայտ է, և աշխատանքի պրոցեսի արգասիքի հասցեային նախորդվածությունը չի փոխում գործի էությունը: Առաջին դեպքում նյութական ծառայությունների իրականացմամբ պայմանավորվող արտադրական հարաբերությունները ծագում են սպառարժեքի անցմամբ (առարկայի սպառողական հատկանիշների վերականգման նպատակով) անձնական սպառման ոլորտից դեպի արտադրական ոլորտ: Վերադառնալով արտադրության ոլորտ՝ իրը կորցնում է սպառման առարկայի իր տնտեսական ձևը և վերածվում է աշխատանքի առարկայի: Այս կարևոր հանգամանքը երբեմն հաշվի չի առնվում նյութական ծառայությունների վերլուծության ընթացքում և այդ պատճառով էլ դրանք իրականացնող աշխատանքը հատկացվում է անարտադրական ոլորտին:

Սոցիալական ինֆրակառուցվածքին վերաբերում է սպասարկման ոլորտի այն մասը, որի գործունեությամբ ստեղծվում են «մաքուր տեսքով գոյություն ունեցող, առարկայական ձև չընդունող, գործողությունը կատարողից անջատ և իրի ձևով ինքնուրույն կեցություն շատացող»¹³ ծառայությունները: Զնյութականացող սոցիալական և անձնական այս ծառայությունները այնպիսի աշխատանքի արդյունք են, որի ներգործության օբյեկտը հենց ինքը մարդն է կամ հասարակությունը: Եթե նյութաիրային արտադրության ոլորտում աշխատանքի պրոցեսը ենթադրում է երեք պարզ մոմենտների (աշխատանքի առարկա, աշխատանքի միջոց և աշխատանք) առկայություն, ապա սոցիալական ինֆրակառուցվածքում նման մասնատումը որոշակիորեն պայմանական է: Այստեղ որպես աշխատանքի առարկա հանդես է գալիս մարդը՝ նրա հոգևոր և ֆիզիկական ունակությունները: Գրեթե նույնը կարելի է ասել նաև աշխատանքի միջոցների մասին, քանի որ աշխատանքային պրոցեսների հիմնական իրականացնողը դարձյալ մնում է մարդը՝ նույնիսկ աշխատանքի առարկայական միջոցների անընդհատ աճող դերի պայմաններում: Սոցիալական ինֆրակառուցվածքի օղակներում աշխատանքը ուղղված է առավելապես մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը, աշխատանքի արդյունքն այստեղ մարմնավորվում է հենց իր՝ մարդու մեջ: Հանրագումարի բերելով վերը շարադրվածը, կարող ենք նշել, որ սոցիալական ինֆրակառուցվածքին են պատկանում սպասարկող գործունեություն իրականացնող ժողովրդատնտեսական համալիրի այն օբյեկտները, որոնք բնութագրվում են հետևյալ հատկանիշների միասնությամբ.

ա. սոցիալական ինֆրակառուցվածքը ներառում է աշխատանքային գործունեության այնպիսի ոլորտներ, որոնց արգասիքը հանդես է գալիս միայն օգտակար գործունեության (և ոչ թե իրի) տեսքով, և դրանք գործում են նյութաիրային արտադրության շրջանակներից դուրս:

բ. սոցիալական ինֆրակառուցվածքի կապը նյութաիրային արտադրությանը միջնորդավորված է և իրականացվում է աշխատուժի վերարտադրության պրոցեսին մասնակցության միջոցով:

Ժողովրդատնտեսական համալիրի կազմում սոցիալական ինֆրակառուցվածքի սահմանազատման գործում էական նշանակություն ունի նաև անարտադրական, ծառայությունների և սպասարկման ոլորտի հետ նրա հարաբերակցության քանակական կողմի ներկայացումը: Պլանավորման և վիճա-

¹³ К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 26, часть I, с. 149.

կազմության գործող կարգի համապատասխան արտադրական և ոչ արտադրական ոլորտների բաժանման հիմքում դրված է հասարակական ամբողջական արդյունքի, ազգային եկամուտի արտադրությանը նրանց մասնակցության հանգամանքը: Սոցիալական ինֆրակառուցվածքի և անարտադրական ոլորտի այս համադրումը ըստ էության ձևական է, քանի որ ժողովրդական տնտեսության ճյուղերի բաշխումը արտադրական և ոչ արտադրական ոլորտներին չի արտացոլում իրերի իրական գրուծյունը: Տնտեսագիտական գրականության մեջ առանձին հետազոտողների կողմից բազմիցս արվել և արվում են առաջարկություններ ժողովրդական տնտեսության ճյուղային և ֆունկցիոնալ դասակարգման կատարելագործման ուղղությամբ: Առաջարկվող դասակարգումների հիմքում հիմնականում դրվում է աշխատանքի բրնույթը: Հաշվի առնելով արտադրողական և անարտադրողական աշխատանքների ուսումնասիրությանը նվիրված առկա ծավալուն գրականությունը՝ նպատակահարմար չենք համարում նման ծավալի աշխատանքում թռուցիկորեն անդրադառնալ այդ պրոբլեմի պատմությանը: Բայց, այնուամենայնիվ, կրփորձենք պարզաբանել մեր դիրքորոշումը: Ամենից առաջ պետք է նշել, և սա ամենաէականն է, որ Կ. Մարքսը արտադրողական և անարտադրողական աշխատանք հասկացությունները կիրառում է կապիտալիստական արտադրանական հիմնական տնտեսական օրենքի (հավելյալ արժեքի արտադրության) տեսանկյունից¹⁴: Կ. Մարքսը գրում է. «Միևնույն աշխատանքը կարող է լինել արտադրողական, երբ ես այն գնում եմ որպես կապիտալիստ, որպես արտադրող, այն բանի համար, որ նրա կիրառումը ինձ բերի մեծացված հավելյալ արժեք և անարտադրողական, երբ ես այն գնում եմ որպես սպառող, երբ ես ծախում եմ իմ եկամուտը նրա (աշխատանքի) սպառողական արժեքի սպառման նպատակով, անկախ այն բանից, անհետանում է արդյոք այդ սպառարժեքը բանվորական ուժի գործադրման դադարեցման հետ միաժամանակ կամ էլ թե այն նյութականանում է, ամրացվում է ինչ-որ առարկայի»¹⁵: Ասված է բավական հստակ, և հարցին մոտենալ Ա. Սմիթի սահմանափակ տեսանկյունից (նյութականացում, արտադրության և սպառման համընկնում), որն արդեն իսկ քննադատորեն վերլուծված է Կ. Մարքսի նույն աշխատանքում, համոզիչ չէ: Որոշ հետազոտողներ նույնացնում են անարտադրողական աշխատանք և ծառայություններ ստեղծող աշխատանք հասկացությունները նաև սոցիալիզմի պայմաններում, սակայն դրանք ըստ էության տարբեր բաներ են: Ամենայն հավանականությամբ նման հարցադրման հիմքում դրվում է Կ. Մարքսի հետևյալ միտքը. «Այն դեպքում, երբ փողը անմիջականորեն փոխանակվում է այնպիսի աշխատանքի հետ, որը չի արտադրում կապիտալ՝ այսինքն անարտադրողական աշխատանքի, այդ աշխատանքը գնվում է որպես ծառայություն»¹⁶: Տվյալ դեպքում Կ. Մարքսի ուսումնասիրության մեջ ծառայություն հասկացությունը ենթադրում է անարտադրողական աշխատանք, բայց ոչ միայն այդ, և դա դարձյալ պայմանավորված է կապիտալիստական արտադրանական առանձնահատկություններ-

¹⁴ Խոսքը «կապիտալի» առաջին հատորի առաջին գլխում Մարքսի կողմից արտադրողական աշխատանքի սկզբնական բնորոշման (նյութական արդյունք, կամ էլ առարկայի ձև ունեցող սպառարժեք) մասին չէ, որը արված է աշխատանքի պարզ պրոցեսի տեսակետից:

¹⁵ К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 26, ч. 1, с. 147.

¹⁶ Ն. տ., էջ 431:

րով: Այդ դեպքում, երբ ծառայություն հասկացությունը բնութագրվում է որպես ուրույն սպառարժեք, որի արտադրությունը միաժամանակ հանդես է գալիս որպես սոսկ սպառման և ոչ թե հավելյալ արժեքի արտադրության պլանացնես, ապա այս տեսակետից էլ նրանում կիրառվող աշխատանքը անարտադրողական է: Սա հարցի մի կողմն է միայն: Մյուս կողմը, և դրանով իսկ ողջ պրոբլեմը, պարզաբանվում է Կ. Մարքսի հետևյալ դատողությամբ. «Հանդիսատեսի նկատմամբ դերասանը հանդես է գալիս... որպես արվեստագետ (անարտադրողական աշխատող — Գ. Գ.), բայց իր ձեռնարկատերի համար նա արտադրողական բանվոր է»: Կ. Մարքսը շարունակում է՝ «Կապիտալիստական արտադրության բոլոր այս դրսևորումները տվյալ ոլորտում (ոչ նյութական արտադրության — Գ. Գ.) այնքան աննշան են ամբողջ արտադրության հետ համեմատած, որ կարող են թողնվել բոլորովին առանց ուշադրության»¹⁷, և հենց սրանով էլ հիմնավորում իր ուսումնասիրություններում գործունեության տվյալ ձևին հանգամանորեն շանդրագառնալու պատճառը: Հենց այս վերացարկումն է, որ հնարավորություն է տվել Կ. Մարքսին արտադրողական աշխատանքի բնորոշիչ կողմերից մեկը համարել առարկայացումը¹⁸:

Սոցիալիզմի պայմաններում ծառայություն հասկացությունը ստանում է նոր բովանդակություն, որը բխում է այդ արտադրանքանակի հիմնական տրեստեսական օրենքի էությունից: Արտադրությունը այստեղ դադարում է ինքնանպատակ լինելուց և ստանում է նոր ուղղվածություն՝ բնակչության հարաճուն պահանջմունքները բավարարելու նպատակ: Եվ քանի որ, հիմնական տնտեսական օրենքի պահանջների հետ կապված, արտադրողական աշխատանքի շրջանակները սոցիալիզմի պայմաններում ընդլայնվում են, իրենցում ընդգրկելով նաև ծառայությունների արտադրության ոլորտը (մի մասը), ապա բնական է, որ քննարկվող հասկացությունների նույնացումը գիտականորեն հիմնավորված չէ:

Քննարկված հանգամանքները տեսադաշտում ունենալը անպայմանորեն հստակություն է մտցնում սոցիալիզմի պայմաններում արտադրողական և ոչ արտադրողական աշխատանք հասկացությունների բնորոշման գործում և հնարավորություն է ընձեռում բնութագրելու սոցիալական ինֆրակառուցվածքում կիրառվող աշխատանքը: Սոցիալական ինֆրակառուցվածքի որոշ ստորաբաժանումներում ստեղծվում են աշխատուժի վերարտադրության համար անհրաժեշտ ծառայություններ հոգևոր բարիքների ձևով (ժողովրդական կրթություն, արվեստ, գիտություն և այլն), այսինքն թողարկվում է տնտեսական առումով արտադրանք՝ աշխատանքն այստեղ կիրառվում է արտադրողաբար, այն արտադրողական է, մյուսներում՝ ոչ: Այստեղ ներառվում են պետական-վարչական, դատա-իրավաբանական օրգանների, բանակի զաղափարախոսության ոլորտի, քաղաքական կազմակերպությունների և այլն ծառայությունները՝ «պարտադրված ծառայությունները»¹⁹: Ինֆրակառուցվածքի այս օղակներում կիրառվող աշխատանքը, որի հետևանքով տեղի չի ունենում սոցիալիստական հասարակության ո՛չ նյութական և ո՛չ էլ հոգևոր հարստության մեծացում, չնայած որ պայմաններ է ստեղծում սոցիալական օրգանիզմի նորմալ գործունեության համար, անարտադրողական է և սոցիա-

¹⁷ Ն. տ., էջ 421:

¹⁸ Ն. տ., էջ 412—420:

¹⁹ Ն. տ., էջ 414:

լիստական արտադրանեղանակի զարգացմանը և կոմունիստականի վերաճմանը համընթաց կնվազի մինչև անհրաժեշտ նվազագույնը:

Ինչպես արդեն նշվել է, ինֆրակառուցվածքի (սոցիալական ինֆրակառուցվածքի) առանձնացման գործում որոշակի նշանակություն ունի նաև նրա ու ծառայությունների և սպասարկման ոլորտների հարաբերակցման հարցը: Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ այդ հասկացությունները գտնվում են տնտեսական կապերի տարբեր հարթությունների վրա, և էթն ծառայությունները և սպասարկման ոլորտները ժողովրդատնտեսական համալիրի ճյուղային կառուցվածքի տարրերն են, ապա սոցիալական ինֆրակառուցվածքը՝ ֆունկցիոնալ կառուցվածքի տարրն է: Ֆունկցիոնալ կառուցվածքը արտացոլում է ժողովրդատնտեսական համալիրում որոշակի ֆունկցիաներ իրականացնող օբյեկտների խմբերի կազմը և հարաբերակցությունը: Նախապես անհրաժեշտ ենք համարում պարզաբանել ծառայությունների ոլորտ և սպասարկման ոլորտ հասկացությունների բովանդակությունը, դարձյալ շանդրադառնալով հարցի պատմությանը, քանի որ այդ կատեգորիաների շրջանակների և հարաբերակցության մասին մեր տնտեսագիտական գրականության մեջ չկա ճանաչում գտած և գերիշխող համակարծիքություն: Տեսարանների մի մասը գրեթե նույնացնում են այս երկու հասկացությունները, մյուսները էականորեն տարբերակում, քանակապես կամ որակապես: Ակնհայտ է, որ միևնույն տնտեսական կատեգորիան երկու տարբեր տեղմիներով անվանելը արդեն իսկ իմաստից զուրկ է: Այս տեսակետից էլ լիովին համամիտ ենք Գ. Ի. Պրավդինին¹⁹ և ծառայությունների ոլորտ հասկացության տակ ընդունում ենք գործունեության այն բնագավառը, որը ներկայացնում է անձնական, հասարակական և արտադրական ուղղվածություն ունեցող բոլոր ծառայությունները, իսկ սպասարկման ոլորտ հասկացության տակ նրա մի մասը միայն՝ բնակչությանը սպասարկող, այսինքն բնակչության սպասարկման ոլորտը: Քանի որ ծառայությունների ոլորտում ընդգրկված են ճյուղեր, որոնք ըստ գործող դասակարգման վերաբերում են նյութական արտադրությանը, ապա քանակական առումով այն ավելի լայն հասկացություն է, քան անարտադրական ոլորտը: Ինչ վերաբերում է բնակչության սպասարկման ոլորտին, ապա այն իրենից ներկայացնում է միայն գործունեության այն բնագավառը, որն անմիջականորեն է ուղղված բնակչության սպասարկմանը և որի մեջ չեն մտնում հասարակական կարգի պահպանումը, երկրի պաշտպանությունը, կառավարման ապարատի ֆունկցիաների զգալի մասը և այլն: Շրջանակների նման բնորոշումից հետևում է, որ սոցիալական ինֆրակառուցվածքը քանակական տեսակետից ավելի նեղ հասկացություն է, քան ծառայությունների ոլորտը, քանի որ չի ներառում արտադրական ուղղվածություն ունեցող ծառայություններ իրականացնող ստորաբաժանումները և գործունեության ձևերը, և ավելի լայն, քան սպասարկման ոլորտը, քանի որ ընդգրկում է նաև վերջինիս շրջանակներից դուրս գտնվող ստորաբաժանումներ:

Տնտեսագիտական գրականության մեջ առաջարկվում են սոցիալական ինֆրակառուցվածքի տարրերի դասակարգումներ ըստ տարբեր սկզբունքների, որոնցում տարբերակիչ հատկանիշի բնորոշությունը պայմանավորում է հետապնդվող նպատակով: Տնտեսական վերլուծությունների ժամանակ հարցին միայն ճյուղային տեսանկյունից մոտենալը անբավարար է, քանի որ հնա-

²⁰ Տե՛ս Դ. Ի. Правдинн, Сфера обслуживания при социализме, М., 1968.

իավորութիւն չի տալիս տնտեսական և սոցիալական պրոցեսների իրականացման ընդհանուր պայմաններ ստեղծող օբյեկտների ամբողջական բնութագրման համար: Բայց ակնհայտ է նաև, որ լիովին անտեսել ճյուղային տեսանկյունով մոտեցման անհրաժեշտութիւնը նույնպես ճիշտ չէ, քանի որ ինֆրակառուցվածքի պլանային զարգացման կարևորագույն խնդիրները լուծվում են ճյուղերի շրջանակներում:

Քանի որ ինֆրակառուցվածքը դիտարկվում է որպես ժողովրդատնտեսական համալիրի ֆունկցիոնալ կառուցվածքի տարր, ապա բնական է, որ նրա հիմնական դասակարգման հիմքում պետք է ընկած լինի ըստ ծառայութիւնների ֆունկցիոնալ նշանակութեան սկզբունքը:

Մեր կողմից առաջարկվող դասակարգման հիմքում դրված են վերը բերված նկատառումները իրենց միասնութեան մեջ: Կախված իրականացվող ծառայութիւնների ուղղվածութիւնից և բնույթից՝ սոցիալական ինֆրակառուցվածքի ներսում առանձնացնում ենք սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոն ինֆրակառուցվածքները: Սոցիալ-տնտեսական ինֆրակառուցվածքում խմբավորված օբյեկտների բնորոշումը նույն տերմինով առաջարկվում է նաև այլ տնտեսագետներին, կողմից: Սակայն անվանաբար և երբեմն քանակապես համընկնող այս հասկացութիւնները ըստ էութեան ամբողջովին տարբերվում են, քանի որ «սոցիալ-տնտեսական» տերմինի միջոցով մեզ մոտ բնորոշվում է սոցիալական ինֆրակառուցվածքի, որպես ամբողջական համակարգի մի մասը, իսկ նշված հեղինակների մոտ՝ ողջ համակարգը: Սոցիալ տնտեսական տերմինը տվյալ դեպքում ընդգծում է համապատասխան օբյեկտների գործունեութեան տնտեսական առումով ուղղակի արգասավորութիւնը: Սոցիալ-տնտեսական ինֆրակառուցվածքում խմբավորված օբյեկտները իրենց հերթին բաշխվում են սոցիալ-հոգևոր և սոցիալ-կենցաղային ինֆրակառուցվածքներում: Սոցիալ-հոգևոր ինֆրակառուցվածքին են վերաբերվում ժողովրդատնտեսական համալիրի հետևյալ ստորաբաժանումները՝ ժողովրդական կրթութիւնը (կադրեր պատրաստող ուսումնական հաստատութիւնները, հանրակրթական դպրոցների համակարգը), մշակույթը և արվեստը (կուլտուրալուսավորչական հիմնարկութիւնները՝ գրադարաններ, ցուցահանդեսներ, թանգարաններ, ակումբներ և այլն, հանդիսագիր ձեռնարկութիւններ և արվեստի հիմնարկութիւններ), առողջապահութիւնը և ֆիզիկական կուլտուրան (բուժկանխարգելիչ, սանիտարաէպիդեմիական, սանիտարալուսավորչական, հանգստի հիմնարկութիւնները, ֆիզկուլտուրային և սպորտային կազմակերպութիւնները), գիտութիւնը և գիտական սպասարկումը (ֆունդամենտալ և հումանիտար): Սոցիալ-կենցաղայինում ներառվում են՝ բնակարանային-կոմունալ տնտեսութիւնը (բնակարանային տնտեսութիւնը, բարեկարգումը, հյուրանոցային տնտեսութիւնը), բնակչութեան կենցաղային սպասարկումը (զուտ ծառայութիւններ ներկայացնող ձեռնարկութիւնները՝ բաղնիքներ, վարսավիրանոցներ, վարձով ապրանքներ տրամադրող, բնակարանների մաքրման և այլն), մարդատար տրանսպորտը և կապը (բնակչութեան սպասարկող), առևտուրը և հասարակական սնունդը (արժեձեռքերի փոփոխման հետ կապված), բնութեան պաշտպանութիւնը (որոշ մասը՝ արգելոցների, ազդային պարկերի և այլնի ստեղծումը), սոցիալական ապահովութիւնը և այլն: Ինստիտուցիոն ինֆրակառուցվածքին են վերաբերվում հետևյալ ճյուղերը և գործունեութեան ձևերը՝ կառավարումը (վարչական), դատական և իրավաբանական հիմնարկները, հասարակական անվտանգութեան պահպանումը, երկրի

կաշտուպանությունը, կուսակցական և հասարակական (ոչ տնտեսական) կազմակերպությունները և այլն:

Սոցիալ-հոգևոր և սոցիալ-կենցաղային ինֆրակառուցվածքների շրջանակներում իրականացվող աշխատանքային գործունեությունն արդյունքը անմիջաբար ներկայացվում է անհատին, մտնում է նրա անձնական սպառման ֆոնդի մեջ և դրանով իսկ արտահայտվում է կենսամակարդակի մեջ: Սոցիալ-հոգևոր ինֆրակառուցվածքում ներառված տարրերի ֆունկցիոնալ նշանակությունը աշխատուժի որակական զարգացման ապահովումն է, մարդու հոգևոր պահանջմունքների բավարարումը: Գործունեությունը սոցիալ-տնտեսական ինֆրակառուցվածքի երկրորդ խմբում ուղղված է անհատի, որպես կենսագործող օրգանիզմի բնական-ֆիզիոլոգիական պահանջմունքների բավարարմանը զանազան «կենցաղային» ծառայությունների մատուցման միջոցով:

Ինստիտուցիոն ինֆրակառուցվածքում ներառվում են անարտադրական ոլորտի ճյուղերը, գործունեության ձևերը, որոնք ապահովում են հասարակության սոցիալական պահանջմունքները սոցիալիստական արտադրանքային հատուկ արտադրական հարաբերությունների պահպանման, զարգացման, ինչպես նաև որոշ արտաքին և այլ ներքին ֆունկցիաների նկատմամբ:

Ինֆրակառուցվածքի զարգացման ընթացքում կազմավորվում են առանձին տարածքային համակցություններ (համալիրներ, կենտրոններ), քանի որ նրա գործունեությունը անմիջաբար ուղղված է որոշակի տարածքում իր կենսագործունեությունը իրականացնող մարդու սպասարկմանը, որը բնական է, պետք է ապահովված լինի իր ֆիզիկական և մտավոր զարգացման պահանջները բավարարող անհրաժեշտ միջոցներով: Ժողովրդատնտեսական համալիրում սոցիալական ինֆրակառուցվածքի ֆունկցիոնալ և տարածքային կառուցվածքային տարր լինելը անհրաժեշտ է դարձնում նրա վերլուծությունը ինչպես ամբողջովին վերցված սոցիալիստական վերարտադրության, այնպես էլ հասարակական աշխատանքի տարածքային բաժանման դիրքերից: Որպես տարածքային կառուցվածքի տարր սոցիալական ինֆրակառուցվածքի օբյեկտները, երբեմն նաև ճյուղերը, կարելի է դասակարգել լոկալ և ռեգիոնալ խմբերի՝ դրա հիմքում ղեկավար սպասարկման գոտիների չափերի հատկանիշը: Այս խմբավորումը հատուկ նշանակություն ունի ճյուղային և տարածքային պլանավորման խնդրի լուծմանը տարբերակված մոտեցման ընտրության, կառավարման ճյուղային և տարածքային օրգանների իրավասության սահմանների որոշման համար: Ինֆրակառուցվածքի լոկալ խմբում ներառվում են այն ստորաբաժանումները, որոնց գործունեությունը ուղղված է հասարակության անդամների սպասարկմանը համապատասխան բնակության վայրի: Դրանք են՝ լուսավորությունը, մշակույթի և արվեստի օբյեկտների զգալի մասը, ֆիզիկական կուլտուրան և սպորտը, բնակարանային կոմունալ տնտեսությունը և բնակչության կենցաղ սպասարկումը, տեղական նշանակության մարդատար տրանսպորտը և բնակչությանը սպասարկող կապը, առևտուրը և հասարակական սնունդը, առողջապահությունը (բացառությամբ ընդհանուր ռեգիոնալ նշանակության հիմնարկությունների), կառավարման տեղական օրգանները և այլն: Լոկալ ինֆրակառուցվածքը ապահովվում է բնակչությանը ամենաանհրաժեշտ ոչ նյութական կենսապայմաններով:

Սոցիալական ինֆրակառուցվածքի ռեգիոնալ ստորաբաժանումների գործունեությունը ուղղված է ամբողջապես վերցված շրջանի և ոչ թե միայն տեղադրման վայրի բնակչության պահանջմունքների բավարարմանը: Նրան են

վերաբերում միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության հաստատությունները, ռեգիոնալ նշանակության առողջապահական հիմնարկները, գիտությունը և գիտական սպասարկումը, համապատասխան կառավարումը, հասարակական կարգի պահպանումը, պետական ապահովությունը և այլն:

Ինֆրակառուցվածքի, որպես տարածքային կառուցվածքի տարրի, տրնտեսական ուսումնասիրությունների ժամանակ անպայմանորեն պետք է նրկատի ունենալ հետևյալ առանձնահատկությունը: Որևէ ստորաբաժանում, լինելով ինֆրակառուցվածքային տարր, միաժամանակ կարող է բնորոշել հասարակական աշխատանքի տարածքային բաժանմամբ տվյալ տարածքային ամբողջությունը հատկացված դերը, այսինքն ղինել մասնագիտացման ճյուղ՝ օրինակ բուհական կենտրոնները: Այս հանգամանքը սակայն ոչնչով չի հակադրվում տվյալ օբյեկտների ինֆրակառուցվածքային բնույթին:

Այսպիսով ժողովրդատնտեսական համալիրի տնտեսական հետազոտությունները ըստ ֆունկցիոնալ, ինչպես նաև ճյուղային և տարածքային հատկանիշների փոխլրացնում են միմյանց և հնարավորություն ընձեռում ներկայացնելու տնտեսության ամբողջականությունը ապահովող կապերի համակարգը, նրա հիմնական հատկանիշները, ամբողջացնում են պատկերը ժողովրդատնտեսական համալիրի ներքին շինվածքի մասին:

Г. С. ГАЛСТЯН — Социальная инфраструктура при социализме. — В работе обоснована целесообразность выделения инфраструктуры (И) как структурного элемента социалистического способа производства, раскрыта социально-экономическая сущность И. Как категория политической экономии социализма социальная инфраструктура (СИ) отражает производственные отношения по поводу функционирования в народнохозяйственном комплексе определенной системы-совокупности отраслей, подотраслей и других подразделений, представляющих услуги. Роль этой системы — создание нематериальных условий для воспроизводства рабочей силы и всестороннего развития личности, удовлетворение социальных потребностей общества. По основным рассмотренным вопросам в статье представлены в систематизированном виде взгляды советских экономистов.

Автор обращается также к вопросу о характере труда, применяемого в СИ. При социализме производительным является труд, создающий материальные и нематериальные блага, т. е. критерием производительности является потребительная стоимость. В этом отношении труд в одних звеньях СИ, а именно в социально-экономической инфраструктуре, является производительным, а в других — в институциональной инфраструктуре, не производительным.